ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ԹԻՎ 2 ԴԱՏԱԿԱՆ ԿԱԶՄԻ

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Ը

## ԱՆՀԱՏԱԿԱՆ ԴԻՄՈՒՄԻ ԸՆԴՈՒՆԵԼԻՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Քաղ. Երևան 7 հոկտեմբերի 2015թ.

Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանի
թիվ 2 դատական կազմը՝

Նախագահությամբ՝ Կ. Բալայանի
Անդամակցությամբ՝ Հ. Նազարյանի
Ա. Պետրոսյանի

Քննության առնելով Ռոբին-Օֆիկ Օսկանյանի դիմումի ընդունելիության հարցը,

## Պ Ա Ր Զ Ե Ց.

1. Ռոբին-Օֆիկ Օսկանյանը 10.09.2015թ. դիմել է ՀՀ սահմանադրական դատարան՝ վիճարկելով ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 376[1]-րդ հոդվածի 4-րդ մասի սահմանադրականությունը, եւ խնդրել է այն ճանաչել ՀՀ Սահմանադրության 17, 18, 19, 25 և 43 -րդ հոդվածների պահանջներին հակասող եւ անվավեր:

2. Դիմողը գտնում է, որ վիճարկվող դրույթը սահմանում է առաջին ատյանի դատարանների՝ կալանքը որպես խափանման միջոց ընտրելու, փոփոխելու կամ վերացնելու, քրեական դատավարության օրենսգրքով նախատեսված դեպքերում՝

խուզարկության, առգրավման, բժշկական հաստատությունում անձանց տեղավորման, ինչպես նաև նամակագրության, հեռախոսային խոսակցությունների, փոստային, հեռագրական և այլ հաղորդումների գաղտնիության իրավունքի սահմանափակման մասին որոշումների վերաքննության կարգով բողոքարկման ցանկը, որտեղ օրենսդիրը որպես խափանման միջոցի տեսակ չի ներառել «անձին ստորագրությունով չհեռանալու» վերաբերյալ բառակապակցությունը, որն իր էությամբ խափանման միջոցի տեսակ է:

Դիմողի կարծիքով՝ վերոնշյալ բացթողման արդյունքում ինքը զրկվել է նաեւ խափանման միջոց նշանակելու որոշումը բողոքարկելու իրավական հնարավորությունից:

3. Դիմումի ուսումնասիրությունը վկայում է, որ դիմողը վիճարկվող դրույթների հակասահմանադրականությունը փորձում է հիմնավորել օրենսդրական բացը մատնանշելով:

ՀՀ սահմանադրական դատարանն իր՝ 2010թ. փետրվարի 5-ի ՍԴՈ-864 որոշման մեջ անդրադառնալով իրավունքի բացի հաղթահարման գործում օրենսդիր մարմնի և սահմանադրական դատարանի իրավասությունների հարաբերակցությանը, նշել է, որ իրավունքի բացը հաղթահարելու գործում օրենսդիր մարմնի և սահմանադրական դատարանի իրավասությունները դիտարկելով իշխանությունների տարանջատման սկզբունքի համատեքստում, որ բոլոր դեպքերում, երբ իրավունքի բացը պայմանավորված է իրավակարգավորման ոլորտում գտնվող կոնկրետ հանգամանքների առնչությամբ նորմատիվ պատվիրանի բացակայությամբ, ապա նման բացի հաղթահարումն օրենսդիր մարմնի իրավասության շրջանակներում է: Սահմանադրական դատարանը գործի քննության արդյունքում անդրադառնում է օրենքի այս կամ այն բացի սահմանադրականությանը, եթե վիճարկվող նորմի բովանդակությամբ պայմանավորված իրավական անորոշությունն իրավակիրառական պրակտիկայում հանգեցնում է տվյալ նորմի այնպիսի մեկնաբանությանն ու կիրառմանը, որը խախտում է կամ կարող է խախտել կոնկրետ սահմանադրական իրավունք: Զարգացնելով իր վերոնշյալ իրավական դիրքորոշումները՝

սահմանադրական դատարանը 2010 թվականի սեպտեմբերի 14-ի ՍԴՈ-914 որոշմամբ արձանագրել է, որ օրենսդրական բացը կարող է հանդիսանալ սահմանադրական դատարանի քննության առարկա միայն այն դեպքում, երբ օրենսդրության մեջ առկա չեն այդ բացը լրացնելու այլ իրավական երաշխիքներ կամ օրենսդրության մեջ համապատասխան իրավական երաշխիքների առկայության պարագայում ձևավորված է հակասական իրավակիրառական պրակտիկա, կամ երբ առկա օրենսդրական բացը չի ապահովում այս կամ այն իրավունքի իրացման հնարավորությունը:

Դիմողի կողմից վիճարկվող ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 376[1]-րդ հոդվածի 4-րդ մասով նախատեսված իրավակարգավորման համաձայն՝ վերաքննության կարգով բողոքարկման ենթակա են միայն առաջին ատյանի դատարանների՝ կալանքը որպես խափանման միջոց ընտրելու, փոփոխելու կամ վերացնելու, նշված օրենսգրքով նախատեսված դեպքերում՝ խուզարկության, առգրավման, բժշկական հաստատությունում անձանց տեղավորման, ինչպես նաև նամակագրության, հեռախոսային խոսակցությունների, փոստային, հեռագրական և այլ հաղորդումների գաղտնիության իրավունքի սահմանափակման մասին որոշումները: Վիճարկվող դրույթը չի նախատեսում ստորագրություն չհեռանալու մասին խափանման միջոցի կիրառման վերաբերյալ դատարանի կայացրած որոշման վերաքննիչ բողոքարկման հնարավորություն, և առաջացած խնդրի լուծման համար օրենսդրության մեջ առկա չեն այլ իրավական երաշխիքներ:

Դիմողի փաստարկների և գործի դատավարական նախապատմության վերլուծության հիման վրա դատական կազմը եզրահանգում է, որ.

- դիմումում առաջադրված հարցերը ենթակա են սահմանադրական դատարանին,
- դիմողն իրավասու է դիմել սահմանադրական դատարան,
- դիմումում առաջադրված հարցի վերաբերյալ առկա չէ սահմանադրական դատարանի որոշում,

- դիմումի առարկայի վերաբերյալ այլ դիմումի հիման վրա սահմանադրական դատարանում գործի դատաքննություն չի իրականացվում,
- դիմողը սպառել է դատական պաշտպանության բոլոր միջոցները:

Ելնելով վերոգրյալից եւ ղեկավարվելով «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 31 և 69-րդ հոդվածների պահանջներով՝ ՀՀ սահմանադրական դատարանի թիվ 2 դատական կազմը

Ո Ր Ո Շ Ե Ց.

1. «Ռոբին-Օֆիկ Օսկանյանի դիմումի հիման վրա՝ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 376[1]-րդ հոդվածի 4-րդ մասի՝ ՀՀ Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ» գործն ընդունել քննության:

2. Բավարարել Ռոբին-Օֆիկ Օսկանյանի՝ պետական տուրքի վճարումից ազատելու վերաբերյալ միջնորդությունը:

3. Սույն գործով դատավարությանը որպես պատասխանող կողմ ներգրավել ՀՀ Ազգային ժողովին:

**Նախագահող՝**

**Անդամներ՝**

7 հոկտեմբերի 2015 թվականի
ՍԴԴԿՈ/2-19